ՍԱՂՄՈՍ 113

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ բարձրացնում է խոնարհին <u>MT ներածություն չկա</u>	Աստծո մեծափա-ռությունն ու ներո-ղամտությունը	ՏԻՐՈՋԸ որպես խոնարհին օգնողի մեծարող օրհներգ	ՏԻՐՈՋ բարության գովաբանություն	Փառքի և ողորմության Աստծուն
113:1-4	113:1ա	113:1	113:1ա	113:1ա
	113:1բ-3		113:1բ-4	113:1բ-3
		113:2-4		
	113:4-6			113:4-6
113:5-9		113:5-9	113:5-9բ	
	113:7-9բ			113:7-9բ
	113:9գ		113:9գ	113:9գ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 113:1-4
[1]Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՋԸ:
Օրհնեցե՛ք, ո՛վ ՏԻՐՈՋ ծառաներ,
Օրհնեցե՛ք ՏԻՐՈՋ անունը,
[2]Օրհնյալ լինի ՏԻՐՈՋ անունը
Սրանից հետո՝ մինչև հավիտյան:
[3]Արևածագից մինչև մայրամուտ
ՏԻՐՈՋ անունը թող փառաբանվի:
[4]ՏԵՐԸ բարձր է բոլոր ազգերի վրա.
Նրա փառքը երկինքներից վեր է:

113:1 Այս համարն ունի միևնույն ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ, որը շեշտադրության համար կրկնվում է երեք անգամ (BDB 237, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ նույն տեխնիկան Սաղմ.96:1-2-ում): Այն

սկսվում է Սաղմոս 111, 112-ի պես (տես Սաղմ. 111:1-ի գրառումը): Այս Սաղմոսը հայտնում է, թե ինչու է պետք փառաբանել ՅԱՀՎԵԻՆ:

1. Նա բարձր է բոլոր ազգերի վրա, Սաղմ. 113:4
2. Նրա փառքը վեր է երկինքներից, Սաղմ. 113:4
3. Նա յուրահատուկ է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ), Սաղմ. 113:5
4. Նա Իրեն խոնարհեցնում է ճանաչելու և ներգրավված լինելու հավատարիմ հետևորդների կյանքերում, Սաղմ. 113:6 (տես՝ Սաղմ. 18:35գ)
5. Նա հոգ է տանում սոցիալապես մեկուսացածների՝ արտաքսվածների և իշխանություն չունեցողների համար, Սաղմ. 113:7-9 (տես՝ Սաղմ. 109:31)՝
   ա. աղքատի,
   բ. կարիքավորի,
   գ. չքերի համար:

❖ **«ՏԵՐԸ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«Ո՞վ ՏԻՐՈՋ ծառաներ»** AB (էջ՝ 131) փոխում է ձայնավորները և սա դարձնում է «ՏԻՐՈՋ գործերը»: Այս ձևը (BDB 714) կարելի է գտնել Ժող. 9:1-ում:

Եթե MT ճիշտ է, ապա «ծառաներ» բառը նկատի ունի՝

1. հրեշտակներին (տես՝ Սաղմ. 103:20-22, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ)
2. տաճարի երկրպագուներին (տես՝ 2 Օրինաց 32:43, Սաղմ. 34:22, 69:36, 105:25, 135:14)
3. Ղևտացիներին, տաճարի քահանաներին (տես՝ Սաղմ. 134:1, 135:1-2)

❖ **«ՏԻՐՈՋ անունը»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

113:2 «Օրհնյա՛լ լինի ՏԻՐՈՋ անունը» Այս ԲԱՑԸ (BDB 138, KB 159, *Pual* ԴԵՐԲԱՑ համադրված «լինել» ԲԱՑԻ ՀԱՅՑԱԿԱՆ հոլովի հետ) զուգահեռ է «փառաբանել» ԲԱՑԻՆ (տես՝ Սաղմ. 145:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

❖ **113:2բ-3ա** Այս երկու տողերը զուգահեռ են և փոխաբերական լեզվով արտահայտում են ՅԱՀՎԵԻ փառքի տարածում:

1. ամեն ժամանակ, Սաղմ. 113:2բ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (‘*olam*))
2. բոլոր տեղերում, Սաղմ. 113:3ա

113:4 «բարձր է բոլոր ազգերի վրա» Այս համարը պատմում է, թե ինչու է պետք Նրան փառաբանել:

1. Նա մեծապես բարձր է բոլոր ազգերի վրա (տես՝ Սաղմ. 97:9, 99:2)
2. Նրա փառքը վեր է երկինքներից (տես՝ Սաղմ. 8:1, 57:11, 148:13):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ

❖ **«փառք»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (*DOXA*):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 113:5-9
5Ո՞վ է մեր ՏԵՐ Աստծուն նման,
Որ բարձունքներում է բնակվում,
6Որ խոնարհվում է երկնքի ու երկրի մեջ
Եղածը տեսնելու համար:
7Որ աղքատին փոշու միջից վերցնում է

Ու կարիքավորին բարձրացնում է աղբանոցից,
[8]Որպեսզի նրան նստեցնի իշխանների հետ՝
Իր ժողովրդի իշխանների հետ,
[9]Որ չբեր կնոջը տան մեջ է բնակեցնում
Ու որդիների ուրախ մայր դարձնում: Ալելուիա՛:

113:5 «Ո՞վ է մեր ՏԵՐ Աստծուն նման» Նկատե՛ք, որ թե՛ ՅԱՀՎԵ և թե՛ *Էլոհիմ* անունները կիրառվում են Իսրայելի Աստծո համար:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>, Գ., Դ.

❖ **«որ բարձրունքներում է բնակվում»** Սա զուգահեռ է Սաղմ.113:4բ: Սա թագավորության համազոր խոսք է (տես՝ Սաղմ.103:19): ՅԱՀՎԵՆ թագավոր է (տես՝ 1 թագ.8:7): Հնագույն իսրայելացիները դիտարկում էին իրենց Աստծուն որպես Իր գահի վրա նստած՝ երկրի մթնոլորտից վեր և ոտքերը հանգչող երկրի վրա (այսինքն՝ պատվանդան)՝ ուխտի տապանակի վրա: Տապանակի ծածկոցը այն վայրն էր, որտեղ սիմվոլիկ կերպով հանդիպում էին երկինքն ու երկիրը:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ</u>

113:6

NASB, NKJV	**«Ով խոնարհեցնում է Իրեն»**
NRSV	**«ով նայում է ներքև»**
TEV, NET	**«նա թեքվում է նայելու»**
NJB	**«նա ծռում է ցած նայելու»**
JPSOA	**«տեսնելու ինչ կա ներքևում»**
REB	**«հաճում է այդքան ցած նայելու»**
LXX	**«նայում է նրան, ինչ որ ներքևում է»**

Այս անսովոր արտահայտությունը մատնանշում է, որ ՅԱՀՎԵՆ գիտի ինչ է տեղի ունենում երկրի վրա, հատկապես Իր ժողովրդի հետ (տես՝ Ելից 3:7-8, Սաղմ.138:6ա,բ):

LXX թարգմանում է այս համարը որպես ՅԱՀՎԵՆ նայում է «ցածում գտնվողին» (այսինքն՝ մարդկանց):

Peshitta թարգմանում է այն որպես «անդունդ» և դարձնում է այս մոլորակի երեք մակարդակներից մեկը՝

1. մթնոլորտը
2. երկիրը
3. ջուրը (անդունդը)

❖ **«երկնքում և երկրի վրա»** Սա խոսում է այս մոլորակի և դրա մթնոլորտի մասին:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ</u>

113:9ա,բ Առաջին նահապետների բոլոր կանայք եղել են չբեր, սակայն ՅԱՀՎԵՆ բացել է նրանց արգանդը:

1. Սառան՝ Ծնն.21:6
2. Ռեբեկան՝ Ծնն.25:21
3. Ռաքելը՝ Ծնն.30:22-23

Այդուհանդերձ, երեխան ՅԱՀՎԵԻ կողմից հատուկ քայլ էր ցույց տալու՝

1. Իր հոգածությունը
2. Իր զորությունը
3. Իր ծրագիրը Իսրայելի և ամբողջ աշխարհի համար (տես՝ Սաղմ.113:4)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

113:9գ Սաղմոսը ավարտում է ճիշտ ինչպես որ սկսել էր: Որոշ գիտնականներ այս տողը դիտարկում են որպես հաջորդ Սաղմոսի մեկնարկ (LXX): Այս արտահայտությունը Սաղմոս 111, 112, 113-ի ներածականն է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք Աստծո մասին նկարագրությունները:
2. Ինչպե՞ս է Աստված Իրեն խոնարհեցնում (Սաղմ. 113:6):
3. Ո՞ր համարն է խոսում միաստվածության մասին: